

Չ Գ Ե Ս Տ Ե Ռ Չ Ա Ր Դ.

Ա. Կ Ա Ն Ա Ն Ց.

Աանայք սովորաբար երկու ձեռք շոր են ունենում, մինը՝ ~~սեփական~~, որ ամենայն օր հագնում են, իսկ միւսը ~~հարկաւոր~~, որ միայն տօն օրերը և հիւր գնալիս են գործ ածում: Այս երկու տեսակ շորերի տարբերութիւնը շատ մեծ է. որքան հասարակ, կեղտոտ և պատառոտուն է առաջինը՝ նոյնքան թանգազին, մաքուր և նոր է երկրորդը: Նոյն իսկ ամենահարուստ մարդու կինը տան մէջ երբէք մաքուր և վաշելուչ չէ հագնում: Նոյնն են և տղամարդիկ. — Խնձորեսկի առաջին հարուստը, որ 50,000 ռ. աւելի կարողութիւն ունի՝ այնպէս զգեստ է հագնում սովորական օրերը՝ որ տասնեակ տեղերից կարկատուած է և ինչպէս ասում են՝ «չուլը չին բարեւ է տալիս», իսկ նրա կինը ոտաբոբիկ է գնում ջուր բերելու, մինչդեռ նրանց տանը կան թանգազին մահուդից կարած հանդերձներ մարդու համար և թաւշեայ մուշտակ՝ կնոջ համար: Տնամէջ այսպէս հասարակ և վատ հագնուելը ոչ թէ ժխտութեան հետեւանք է, այլ սովորութեան: Եթէ հարստի կինը ամառը ոտնաման է հագնում՝ գիւղի կանայք բամբասում են նրան, թէ տեսէք, զարմացնել է ուզում, որ ինքը հարուստի կին է: Եթէ կինը աշխատում է ամենայն օր ճաշակով և մաքուր հաբնուել, ոչ միայն դրացիներն են բամբասում, թէ կամենում է մարդկանց դիւր գալ, այլ և ամուսինը կասկածում և խանդոտում, կռւում է նրա հետ: Սակայն Ռազուի ազդեցութեամբ այս սովորութիւնը հետզհետէ վերանում է: Ռազուից վերադարձած երիտասարդն աշխատում է ամէն օր մաքուր և լաւ հագնուել, շատ անգամ էլ փոխում է տեղական տարազը և եւրոպական շորեր հագնում: Նրա ընտանիքն էլ նրան հետեւելով աւելի լաւ է հագնում: Աանայք զգեստի վերաբերութեամբ աւելի պահպանողական են, քան տղամարդիկ, և միայն ծալրաւեղ դէպքում համաձայնում են տեղական տարազը փոխել: Այսպիսի ծալրաւեղ դէպքեր չառաջ են գալիս միայն այն ժամանակ, երբ երկար ժամանակով տեղափոխւում են Ռազու և կամ ուրիշ քաղաք: Այսպիսի դէպքերում նրանք միշտ գերադասում են Թիֆլիսի վրացական տարազը, և համարեա՝ ոչ մի գանգեզուրցի կին տեղական զգեստից չի անցել եւրոպական գլխարկի: Նոյն իսկ երբ ուրիշ քաղաքից եկած, եւրոպական գլխարկ ծածկող աղջիկները գործեսցիներին հարս պէտք է դառնան՝ նրանցից

միշտ պահանջում են, որ զոնէ վրացական ձևի փոխեն իրենց չարդարանքը և միայն կրթուած երիտասարդների խիստ ընդգիծադրութիւնը մի կերպ կարողանում է նրանց եւրոպական տարազով մտցնել իրանց նահապետական ընտանիքի մէջ:

Կանանց զգեստները սովորաբար իրենք կանաչք են կարում, սակայն Բագովի ազդեցութեամբ լոյս են ընկել կանանց զգեստ կարող տղամարդ դերձակներ. միմիայն Խնձորեսկում 35 դերձակ կան, որոնց կարի մեքենաների ձաշնը, որ գալիս է քարատակներից՝ մի տեսակ հակադիպութեան տպաւորութիւն է անում:

Ընդհանրապէս կանանց շորերը կարմիր են, միայն պառաւանների արխալուղը կանանչագոյն է լինում: Աղջիկների զգեստներն էլ բոլորովին նոյնն են, միայն սրանք իրաւունք չունին գլխի չարդարանք կրելու, այլ մի կարմիր կամ սպիտակ «եալուխ» են կապում:

Կանանց զգեստը բաղկանում է հետևեալ մասերից.

Ջապիկ.—Կարում են առաւելապէս ալըշի և կարմիր մահուդ-վարի կտորներէից, երբեմն էլ կարմիր ալըշից: Երկար է լինում և իջնում է մինչև ոտները: Կուրծքը ամբողջապէս և առաջի երևացող մասերը կարում են ալըշից կամ կարմիր մահուտվարուց, իսկ մէջքը և չետեկ չերևացող մասը՝ շէշէ:—Կուրծքը բացւում է մինչև գոտկա. տեղին և երբեմն դաշթանի՝ կոճակներով կոճկւում:

Ջապկընկեր.—Կարում են խամ շիլից, սպիտակ կամ կապույտ խամ կտաւից, փողերը նեղ են և երկար: Վերին ծալքը դարձուած է և «խոնջանաղարձ» կարուած, որի միջով անց է կացրած բամբակեայ կամ բրդեայ մի կապ—խոնջան—որը մէջքին կապելով՝ մի կողմում հանգուստում են:

Ջապկընկերի ծալքերը դնում են փող-սող մէջ. սա թաւիշեայ կտորից երկու վերջով լաշնութեան և ոտի հաստութեան համեմատ մի կտոր է, երկու ծալքը միմեանց հետ կարած:

Արխալուղ.—Կարում են մեծ մասամբ կարմիր շալից, չիթ աստառով. հարուստները՝ մետաքսից կամ ուրիշ կարմիր կտորից, միևնոյն գոյնի չիթ աստառով, իսկ պառաւանները՝ մարինոսի կտորից, մուգ գունաւոր չիթ աստառով: Տնամիջի արխալուղը սովորաբար կարում է կարմիր չիթից, աւելի հասարակ չիթ աստառով: Արխալուղը բաղկանում է երեք կտորից—մէջք և երկու փէշ: Փէշերից իւրաքանչիւրը լինում է մէջքի կէս մեծութեան, և կարուած է նրա հետ վերևից մինչև գոտկատեղին, իսկ աչտտեղից ներքև, բաց է: Գոտկատեղու մօտ, երկու կողքերին կարուած են մի մի գրպան: Մէջքը քիւզմա չունի որով և՛ գլխաւորապէս տարբերում է սիսիանցու արխալուղից: Փէշերն իջնում են ծնկներից մի քիչ ներքև: Կուրծքը եռանկիւնաձև

բացուած է և գօտկատեղում կոճկում է 2—6 արծաթի ըուբլիանոցներով: Այս ըուբլիանոցները իբր կոճակ են ծառայում, որոնց համար կանթեր են շինել տալիս և երկ երկու կամ երեք երեք միմեանց կայցնում:

Թւեքերը հասնում են շմինչև մատները՝ ծալքերը՝ միայն արմուկի մօտից եռանկիւնաձև կտրուած են, կանաչ դանաւուղից աստառ ձգած, և եզրերին եռանկիւնաձև դասաւորուած արծաթի «է-բ-» կարած: Սէ-բ-» արծաթէ թեղի սնամէջ ոլորուածք է, 4-5 սանտիմետր երկարութեամբ: Արմուկից բարձր էլ կարում են արծաթէ գնտաձև կոճակներ (Է-Է-Է-Է) կամ նշաձև և նշաչափ սնամէջ արծաթ (Է-Է-Է-Է):

Արխալուղի բոլոր եզրերին կարում են կանաչ դանաւուղի կամ կարմիր մահուզվարի կտորից մի մատնաչափ լայնութեամբ «է-բ-» (ժապաւէն):

Հարսանեկան արխալուղները, որ հագնում են մի ուրիշ արխալուղի վրայից՝ կարում են թաւիշից, դանաւուղ աստառով: Սրանց թւեքերը կարճ են լինում, մինչև արմուկը, և կոճակներ չեն ունենում:

Արխալուղը հագնում են շապկի վրայից:

Պօսի.— դեռահասներինը լինում է մետաքսից, իսկ պառանքներինը՝ շալից: Սա 65 սանտիմետր լայնութեամբ և 3-3½ մետր երկարութեամբ մի կտոր է, որ կապում են մէջքին արխալուղի վրայից:

Արձբին կարում կամ քցում են է-բ-:—Սա բաղկանում է երկու շարանից, աչիւնքն երկու շարք արծաթեայ 20 կուպէկանոցներ, կամ հին դրամներ, իւրաքանչիւր շարքում 12 հատ, որոնք շարուած են մի դալթանի վրայ և յետոյ կարուած են մի նեղ շորի վրայ:

Քիււբ.—Ասրում են կարմիր թաւիշից և շուրջը, ինչպէս և թեւերի ծալքերին ու օձիքին՝ 5 սանտիմետր լայնութեան աղուէսի կամ ալ մորթի կարում: Այս զգեստը հագնում են արխալուղի վրայից և միայն տօն օրերին, ամառ լինի, թէ ձմեռ: Քիււբի գործածութիւնը՝ Ղարաբաղից է մտել և միայն փոքր ի շատէ ունեւորներին է մատչելի¹⁾:

¹⁾ Գլխի չարդարանքը միանգամայն նման լինելով Սիսիանի կանանց գլխի չարդարանքին, մենք զանց առանք նկարագրելու տես. Սիսիան:

Զ Պ Ե Ս Տ Ի Ա Ր Ժ Է Ք Ը:

Ջապիկ	րուբլի	1,50—2.	3—5.
Ջապկընկեր		0,40—0,70.	0,40—0,70.
Արխայուղ		3—3,50.	10—20.
Պօտի		0,50—1,00.	1,20—2.
Շախա, սիւրմա և դիւկմա		"	8—12.
Քիւրք		"	20—30.

Հնդամէներ՝ . . . 5,40—7,20. 42,60—69,70.

Ո Տ Ն Ա Մ Ա Ն.

Արջիկներն ու կանաչք տարուայ մեծագոյն մասը սովորաբար բօրիկ են անցկացնում, և միայն ձմեռը, նոյնպէս տօն օրերին և ուխտ գնալիս՝ հազնում են գուլպայ և չմուշկի ճաղուղի ազդեցութեամբ կիսակօշիկները (ботины) կամաց կամաց մտնում են նորահարսերի օժիտներում, իբրև զարգարանք:

Բ. Տ Ղ Ա Մ Ա Ր Դ Կ Ա Ն Յ.

Ջապիկ.—Աարում են գունաւոր չթից կամ սպիտակ մահուդվարուց: Զատ երկար չէ լինում: Կուրծքը բացւում է աջ կողմից և անրակի մօտ կոճկւում. թւերին կոճակ չունի, այլ բաց կախ են ընկնում:

Փոխան.—Աարում են կապոցտ ներկած կոտալից, փողկերը կէս արշին լացնութեան: Հազնում են շապիկի տակից և խռչառէ կապում: Սա անց է կացրած փոխանի վերի եզրին արած դարձուածքի մէջ և կապելիս ոչ մի բացուածք չէ մնում:

Ջալվար.—Հազնում են գլխաւորապէս փոքր ի շատէ քաղաքակրթուած և հարուստ մարդիկը: Աարում են շալից, միանգամայն փոխանի ձևով: Այժմ հետզհետէ տարածւում է եւրոպական ձևի շալվարը:

Չիսկի կամ Տալաղ.—Բրդից կամ մետաքսից գործուած $2\frac{1}{2}$ —3 վերշոկ (10—13 սանտիմետր) լայն. և $\frac{3}{4}$ արշին (54 ս.) երկար. մի կապ է, որի ծալին մի թել, որ է ամրացրած. Սրանով կապում են փոխանի ծալքերը:

Արխայուղ.—Կարում են կապտագոյն մահուղվարուց, քիշմիրից, չթից և այլն: Ծեբերինը իջնում է մինչև ծնկները, իսկ երիտասարդներինը մի քիչ կարճ է լինում: Մէջքը սեղմուած է *Բեռնալ*, կուրծքը եռանկիւնաձև բացուած է, թէև աչժմ երիտասարդներինը աչկս բաց չէ լինում, աչ ամբողջովին կոճկած: Բաց կուրծքով՝ արխայուղները միայն գօտկատեղում են կոճկում երկու կամ երեք զալթանի կոճկով: Արխայուղը ունի երկու գրպան:

Մէջքին կապում են կամ գօտի, որ մահուղվարու 2,84 մ. (4 արշ.) երկարութեան և 71 ս. (մի արշին) լայնութեան կտոր է, և կամ քեամար:

Չուխայ.—Կարում է բրդից գործած շալից. գօտկատեղում բիւզմա ունի և փէշերն իջնում են ծնկներից փոքր ինչ ներքև: Կուրծքը եռանկիւնաձև բացուած է և գօտկատեղում *չալա* 3 կոճկով կոճկում: Ամբողջ չուխայի շուրջը եզրերին զալթան է կարած:

Գլխներին ծածկում են ոլխարի մորթուց կարած *խալա*:

Ոտներին հագնում են դուլպա և տրեխ: